ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԶ ՀՈՒՇՈՒՄ ԵՆ...



ՀԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՑ
(1925–1994)

Ծնվել է Իրանի Թավրիզ քաղաքում: Ավարտել է Թեհրանի Սեն Լուի ֆրանսիական քոլեջը և Հայկազյան-Թամարյան հայկական դպրոցը: 1944թ. եղել է Թեհրանի Հայ պատանեկան մշակութային միության հիմնադիրներից: 1946թ. այն վերանվանվել է Հայ երիտասարդական մշակութային միություն: 1947–49 թթ. սովորել է ԱՄՆ-ի Միսսուրի նահանգի, 1950–52 թթ.՝ Նյու Յորքի Կոլումբիայի համալսարաններում: Մասնագիտացել է լրագրության մեջ՝ երկրորդ մասնագիտություն ընտրելով հոգեբանությունը: 1951–53 թթ. տեղափոխվել է Նյու Յորք, որտեղ մեկ տարի դասավանդել է Քորնել համալսարանի լեզվաբանական բաժնում: 1954–79 թթ. աշխատել է «Ամերիկայի ձայն» ռադիոկայանի հայկական բաժնում: Հեղինակել է պատմվածքներ, նորավեպերի ժողովածուներ: Մահացել է ԱՄՆ Բոստոն քաղաքում: Կարապենցի անունով է կոչվում Երևանի թիվ 6 հիմնական դպրոցը: